**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**«24» օգոստոս 2022թ.**
**N 3912-Ա հրամանի**

# ԾՐԱԳԻՐ

## ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԱՊԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 4-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան

(«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոց)

Հայ օգնության ֆոնդ

| Թեմա | Նկարագիր | Տևողություն | Պատասխանատու | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. Ռևմատոլոգիա. Ռևմատոիդ արթրիտ, համակարգային սկլերոդերմիա, պարբերական հիվանդություն /ախտորոշման ժամանակակից մեթոդները և դրանց արդյունքների մեկնաբանությունը, հիվանդների վարման նոր մոտեցումներ/ | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br>• Տիրապետել ախտորոշման ժամանակակից մեթոդների հնարավորությունների մասին տեղեկությանը<br>• ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող թերապևտիկ վիճակները,<br>• հիվանդին նշանակել բուժում/ սննդակարգ ժամանակակից ուղեցույցներին համապատասխան, |
| 2. Գաստրոէնտերոլոգիա (գաստրոէզոֆագալ ռեֆլյուքս հիվանդություն, ստամոքսի և 12- | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում | 18 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մատնյա աղիքի խոցային հիվանդություն, աղիների բորբոքային հիվանդություններ, լյարդի ցիրոզ , վարման ուղեցույցները) | • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | | | տիրապետել ինհալացիոն թերապիայի մոտեցումներին, ԷՍԳ վերծանման հմտության ավելացում, տրոպոնինի էքսպրես թեստի արդյունքի վերծանման հմտություն<br>• վարել ծանր, ծայրահեղ ծանր վիճակներում գտնվող հիվանդին,<br>• կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար: |
| 3. Թոքաբանություն. թոքաբորբեր, քրոնիկական բրոնխիտ, թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն, բրոնխային ասթմա: Սպիրոմետրիա, կիրառությունը, մեկնաբանությունը, ինհալացիոն թերապիա, կիրառությունը, հմտություններ | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | |
| 4. Նեֆրոլոգիա (գլոմերուլոնեֆրիտներ, երիկամների քրոնիկական հիվանդություն: Ծանոթացում հեմոդիալիզի կլինիկայի աշխատանքների մեթոդներին | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | |
| 5. Զարկերակային հիպերտենզիա. վարման ժամանակակից մոտեցումները, դինամիկ հսկողությունն առաջնային օղակում: Սրտի իշեմիկ հիվանդություն: | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | |
| 8. Քրոնիկ սրտային անբավարարություն: Թոքային սիրտ: Թոք-սրտային անբավարարության բուժման սկզբունքները | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում | 24 ժամ<br>9:00-15:00 | Կարինե Մարկոսյան<br>Զինաիդա Ջնդոյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ)<br><br>Դասախոսություններ ՀԳԲԳ-ում<br><br>Համակարգչային գրագիտության դասընթացներ ՀԳԲԳ-ում<br><br>ՇՄԶ արդյունքների ամփոփում | • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում<br><br>Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում<br><br>• Գերիատրիայի հիմունքները: Ծերացումը որպես 21-րդ դարի հիմնախնդիր<br>• Բժշկութուն և իրավունք<br>• Ցավի կառավարում<br>• Ալերգիկ հիվանդություններ<br>• Արյունաբանություն<br><br>MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց<br><br>Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 12 ժամ<br><br>6 ժամ<br><br>24 ժամ<br><br>10:00-12:00 | Աննա Շիրինյան<br><br>Արթուր Թորոսյան<br>Նարինե Մովսիսյան<br>Վիոլետա Զոփունյան<br>Արմինե Հակոբյան<br>Երվանդ Հակոբյան<br><br>Համբարձում Սիմոնյան<br>Առնո Հովհաննիսյան | |

Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ:

Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները պետք է ներկայացնեն կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցները կարող են օգտվել Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված չէ (09:00-15:00) 6 ժամվա մեջ

Թիրախային լսարան՝ ընտանեկան բժիշկներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 15-20 հոգի: